ՀԱՎԵԼՎԱԾ ԹԻՎ 1
Հայաստանի Հանրապետության Շիրակի
մարզի Արթիկ համայնքի ավագանու
2022 թվականի հունիսի 24-ի թիվ 125-Ն որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ, ԱՃՈՒՐԴ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐՎՈՂ ՄԵՔԵՆԱՆԵՐԻ ՑԱՆԿԸ ԵՎ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳՆԵՐԸ

Հ/Հ	Մեքենայի անվանումը	Մեքենայի պետհամարանիշը և թողարկման տարեթիվը	Մեկնարկային գինը Հայաստանի Հանրապետության դրամ
1	Lexus RX300 մակնիշի թեթև մարդատար	181LL 70, թողարկման տարթիվը՝ 1999թվական	1 185 000 (մեկ միլիոն հարյուր ութսունհինգ հազար)
2	KIA SORENTO 3.8 մակնիշի թեթև մարդատար	371AX 61, թողարկման տարթիվը՝ 2006թվական	2 187 000 (երկու միլիոն հարյուր ուսթսունյոթ հազար)
3	KIA SORENTO 3.5 մակնիշի թեթև մարդատար	827LL70, թողարկման տարթիվը՝ 2004թվական	1 786 000 (մեկ միլիոն յոթ հարյուր ութսունվեց հազար)
4	KIA SORENTO 3.5 մակնիշի թեթև մարդատար	865LL70, թողարկման տարթիվը՝ 2005թվական	1 786 000 (մեկ միլիոն յոթ հարյուր ութսունվեց հազար)
5	ԳԱԶ 31105 մակնիշի թեթև մարդատար	616LL11, թողարկման տարթիվը՝ 2006թվական	384 000 (երեք հարյուր ութսունչորս հազար)
6	MITSUBISHI PAJERO IO 1.8 մակնիշի թեթև մարդատար	730LL70, թողարկման տարթիվը՝ 1999թվական	785 000 (յոթ հարյուր ութսունհինգ հազար)
7	GAZ 3110 մակնիշի թեթև մարդատար	439SU14, թողարկման տարթիվը՝ 1997թվական	117 000 (մեկ հարյուր տասնյոթ հազար)
8	ՎԱԶ -21214 մակնիշի թեթև մարդատար	095 LL 70, թողարկման տարթիվը՝ 2005թվական	320 000 (երեք հարյուր քսան հազար)
9	VAZ -21063 մակնիշի թեթև մարդատար	467 SU 14, թողարկման տարթիվը՝ 1990թվական	90 000 (իննսուն հազար)
10	VOLKSWAGEN GOLF 2.01 մակնիշի թեթև մարդատար	702LL70, թողարկման տարթիվը՝ 2005թվական	1 185 000 (մեկ միլիոն հարյուր ութսունհինգ հազար)
11	MITSUBISHI OUTLANDER 2.4 մակնիշի թեթև մարդատար	176 LL 70, թողարկման տարթիվը՝ 2003թվական	985 000 (ինը հարյուր ութսունհինգ հազար)
12	VAZ 21703 մակնիշի թեթև մարդատար	326 LL 70, թողարկման տարթիվը՝ 2008թվական	585 000 (հինգ հարյուր ութսունհինգ հազար)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա.ՈՍԿԱՆՅԱՆ

Հայաստանի Հանրապետության
Շիրակի մարզ, Արթիկ համայնք,
2022 թվականի հունիսի 24

Հավելված 2
Հայաստանի Հանրապետության Շիրակի
մարզի Արթիկ համայնքի ավագանու
2022 թվականի հունիսի 24-ի թիվ 125-Ն որոշման
հավելված թիվ 2

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
Աճուրդի մասին հրապարակային ծանուցման

1.Աճուրդի անցկացման օրը՝ 2022 թվականի հուլիսի 19-ին, ժամը 11-00-ին:
2.Աճուրդի կազմակերպիչը՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկի համայնքապետարան, ի դեմս աճուրդային հանձնաժողովի (աճուրդի կազմակերպիչ):
3.Աճուրդի անցկացման վայրը /հասցեն/՝ Հայաստանի Հանրապետություն Շիրակի մարզ, Արթիկ համայնք, քաղաք Արթիկ, Ազատության հրապարակ 1 (Արթիկի համայնքապետարանի շենք):
4.Աճուրդի ձևը և անցկացման կարգը ՝ դասական եղանակ՝ մեկնարկային գնի բարձրացմամբ, որի ընթացքում հաղթող է ճանաչվում աճուրդի այն մասնակիցը, որն աճուրդի դրված գույքի համար առաջարկել է առավելագույն բարձր գին:
5.Աճուրդի դրված գույքի /լոտ/ նկարագրությունը

Գույքի անվանումը	Գույքի սեփականատերը	Գույքի տեխնիկական տվյալները	Գույքի տեխնիկական վիճակի նկարագրությունը	Գույքի մեկնարկային գինը /Հայաստանի Հանրապետության դրամ/
Լոտ N1 Lexus RX300 մակնիշի թեթև մարդատար	Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնք	Մակնիշը՝ Lexus RX300, հ/հ 181ԼԼ 70, թողարկման տարթիվը՝ 1999թվական	Ընդհանուր առմամբ ավտոմեքենան գտնվում էր բավարար վիճակում, թափքի վրա առկա էին կորոզիոն հետքեր, նստատեղերը մաշված էին և պատռված, վնասված էին առջևի ձախ անվաթևը, ձախ առջևի դուռը և այլն: Շարժիչը աշխատում էր անկանոն, շարժիչի վրա առկա էին յուղի արտանետման հետքեր և այլն:	1 185 000 (մեկ միլիոն հարյուր ութսունհինգ հազար)
Լոտ N 2 KIA SORENTO 3.8 մակնիշի թեթև մարդատար	Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնք	Մակնիշը՝ KIA SORENTO 3.8, հ/հ 371AX 61, թողարկման տարթիվը՝ 2006թվական	Ընդհանուր առմամբ մեքենան գտնվում է լավ վիճակում: Վնասված են հետևի ձախ կանգ լապտերը, հետևի թափարգելը, հետևի ձախ դուռը, շարժիչի ծածկոցը:	2 187 000 (երկու միլիոն հարյուր ուսթսունյոթ հազար)
Լոտ N 3 KIA SORENTO 3.5 մակնիշի թեթև մարդատար	Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնք	Մակնիշը՝ KIA SORENTO 3.5, հ/հ 827LL70, թողարկման տարթիվը՝ 2004թվական	Ընդհանուր առմամբ ավտոմեքենան գտնվում է լավ վիճակում: Թափքի վրա առկա էին կորոզիոն հետքեր և այլն:	1 786 000 (մեկ միլիոն յոթ հարյուր ութսունվեց հազար)
Լոտ N 4 KIA SORENTO 3.5 մակնիշի թեթև մարդատար	Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնք	Մակնիշը՝ KIA SORENTO 3.5, հ/հ 865LL70, թողարկման տարթիվը՝ 2005թվական	Ընդհանուր առմամբ ավտոմեքենան գտնվում է լավ վիճակում: Թափքի վրա առկա էին կորոզիոն հետքեր, անվադողերը կիսամաշ էին, կոտրված էր աջ կողային հայելին և այլն:	1 786 000 (մեկ միլիոն յոթ հարյուր ութսունվեց հազար)
Լոտ N 5 ԳԱԶ 31105 մակնիշի թեթև մարդատար	Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնք	Մակնիշը՝ ԳԱԶ 31105, հ/հ 616LL11, թողարկման տարթիվը՝ 2006թվական	Ընդհանուր առմամբ ավտոմեքենան գտնվում էր բավարար վիճակում: Թափքի վրա առկա էին կորոզիոն հետքեր, վնասված էին հետևի ձախ անվաթևը, հետևի թափարգելը և այլն: Անվադողերը կիսամաշ էին: Կոտրված էր կողային հայելին: Մեքենան գործարկելիս լսվում էին օտարածին ձայներ:	384 000 (երեք հարյուր ութսունչորս հազար)

Լոտ N 6 MITSUBISHI PAJERO IO 1.8 մակնիշի թեթև մարդատար	Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնք	Մակնիշը՝ MITSUBISHI PAJERO IO 1.8, h/h 730LL70, թողարկման տարթիվը՝ 1999թվական	Ընդհանուր առմամբ ավտոմեքենան գտնվում էր անբավարար վիճակում: Տնական ժամանակ չէր շահագործվել, թափքի վրա առկա էին կորոզիոն հետքեր, նստատեղերը մաշված և պատռված էին, վնասված էր առջևի աջ դռան ապակին, առկա էր էլեկտրականության հետ խնդիրներ: Վնասված էին հետևի և առջևի թափարգելները:	785 000 (յոթ հարյուր ութսունհինգ հազար)
Լոտ N 7 GAZ 3110 մակնիշի թեթև մարդատար	Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնք	Մակնիշը՝ GAZ 3110, h/h 439SU14, թողարկման տարթիվը՝ 1997թվական	Ընդհանուր առմամբ ավտոմեքենան գտնվում էր անբավարար վիճակում: Տնական ժամանակ չէր շահագործվել, առկա էին կորոզիոն գոյացություններ, թափքը վնասված և դեֆորմացված էր, բացակայում էին դռների ապակիները:	117 000 (մեկ հարյուր տասնյոթ հազար)
Լոտ N 8 ՎԱԶ -21214 մակնիշի թեթև մարդատար	Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնք	Մակնիշը՝ ՎԱԶ 21214, h/h 095 LL 70, թողարկման տարթիվը՝ 2005թ.վական	Ընդհանուր առմամբ ավտոմեքենան գտնվում էր բավարար վիճակում: Թափքի վրա առկա էին կորոզիոն հետքեր, նստատեղերը մաշված էին, վնասված էին հետևի թափարգելը, բեռնախցիկի ծածկոցը: Շարժիչը աշխատում էր անկանոն, շարժիչի վրա առկա էին յուղի արտանետման հետքեր և այլն:	320 000 (երեք հարյուր քսան հազար)
Լոտ N 9 VAZ -21063 մակնիշի թեթև մարդատար	Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնք	Մակնիշը՝ VAZ 21063, h/h 467 SU 14, թողարկման տարթիվը՝ 1990թվական	Ընդհանուր առմամբ ավտոմեքենան գտնվում էր անբավարար վիճակում: Տնական ժամանակ չէր շահագործվել, առկա էին կորոզիոն գոյացություններ, թափքը վնասված և դեֆորմացված էր:	90 000 (իննսուն հազար)
Լոտ N 10 VOLKSWAGEN GOLF 2.01 մակնիշի թեթև մարդատար	Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնք	Մակնիշը՝ VOLKSWAGEN GOLF 2.01, h/h 702LL70, թողարկման տարթիվը՝ 2005թվական	Ընդհանուր առմամբ ավտոմեքենան գտնվում էր բավարար վիճակում: Վնասված էր շարժիչի ծածկոցը, ջերմափոխանակիչի երեսպատոցը, առջևի թափարգելը, լուսարձակ լապտերները և դիմապակին վնասված էր: Շարժիչն աշխատում էր անկանոն, առկա էին յուղի արտանետման հետքեր:	1 185 000 (մեկ միլիոն հարյուր ութսունհինգ հազար)
Լոտ N 11 MITSUBISHI OUTLANDER 2.4 մակնիշի թեթև մարդատար	Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնք	Մակնիշը՝ MITSUBISHI OUTLANDER 2.4 , h/h 176 LL 70, թողարկման տարթիվը՝ 2003թվական	Ընդհանուր առմամբ ավտոմեքենան գտնվում էր բավարար վիճակում: Թափքի վրա առկա էին կորոզիոն հետքեր, նստատեղերը մաշված էին, վնասված էին առջևի և հետևի թափարգելները, ձախ առջևի դուռը, շարժիչի և բեռնախցիկի ծածկոցները և այլն: Շարժիչն աշխատում էր անկանոն, առկա էին յուղի արտանետման հետքեր:	985 000 (ինը հարյուր ութսունհինգ հազար)
Լոտ N 12 VAZ 21703 մակնիշի թեթև մարդատար	Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնք	Մակնիշը՝ VAZ 21703 h/h 326 LL 70, թողարկման տարթիվը՝ 2008թվական	Ընդհանուր առմամբ ավտոմեքենան գտնվում էր բավարար վիճակում: Թափքի վրա առկա էին կորոզիոն հետքեր, նստատեղերը մաշված էին և պատռված, վնասված էին հետևի թափարգելները, բեռնախցիկի և շարժիչի ծածկոցները, ջերմափոխանակիչի երեսպատոցը, աջակողմյան դռները և այլն: Շարժիչն աշխատում էր անկանոն, շարժիչի վրա առկա էին յուղի արտանետման հետքեր:	585 000 (հինգ հարյուր ութսունհինգ հազար)

6.Աճուրդի պայմանները՝

1)Աճուրդին կարող են մասնակցել ֆիզիկական և իրավաբանական անձինք, ինչպես նաև համայնքները:

2)Աճուրդին մասնակցել ցանկացողները ներկայացնում են՝

ա. հայտ՝ սահմանված ձևանմուշով,

բ. ֆիզիկական անձանց համար՝ անձնագրի պատճե,

գ. իրավաբանական անձանց և համայնքների համար՝ ձեռնարկության հիմնադիր փաստաթղթերի պատճենները և ներկայացուցչի լիազորությունը հաստատող փաստաթուղթը,
դ. աճուրդի մասնակցության տեղական վճարի անդորրագիրը
ե. նախավճարի մուծման անդորրագիրը:

3)Աճուրդի մասնակցության հայտերն ընդունվում են Արթիկի համայնքապետարանում՝ աճուրդային հանձնաժողովի կողմից 2022 թվականի հունիսի 26-ից մինչև հուլիսի 18-ը ներառյալ՝ յուրաքանչյուր աշխատանքային օր, ժամը՝ 11:00-ից մինչև 16:00-ն:

4)Աճուրդի մասնակցի համար գնային առաջարկի նվազագույն չափը սահմանվում է մեկնարկային գնի 5 տոկոսի չափով:

5)Աճուրդի մասնակցության վճարի չափը սահմանված է 2000 (երկու հազար) Հայաստանի Հանրապետության դրամ:

6)Աճուրդի մասնակից չհամարվող անձանց (դիտորդներ) համար մուտքի տոմսի վճարը սահմանվում է 1000 (մեկ հազար) Հայաստանի Հանրապետության դրամ:

7)Աճուրդում հաղթած է համարվում այն մասնակիցը, ով ներկայացրել է ամենաբարձր գնային հայտ:

8)Աճուրդում հաղթող ճանաչված մասնակցի հետ առք ու վաճառքի պայմանագիրը կնքվում և գույքի ամբողջ գնի վճարումը կատարվում է աճուրդի կայացման օրվանից հետո 10-օրյա ժամկետում:

9)Աճուրդի կանոնակարգին ծանոթացումը և լուսապատճեի տրամադրումը կատարվում է Արթիկի համայնքապետարանում 2022 թվականի հունիսի 26-ից մինչև հուլիսի 18-ը:

10) Աճուրդի դրված գույքի ուսումնասիրման համար ժամկետներ սահմանվում են 2022 թվականի հունիսի 26-ից մինչև հուլիսի 18-ը ժամը 10:00-ից մինչև 17:00-ն Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքում՝ համայնքապետարանի բակում:

11)Աճուրդը կայանալու կամ չկայացած հայտարարվելու պահից մեկ աշխատանքային օրվա ընթացքում աճուրդում չհաղթած մասնակցին վերադարձվում է նախավճարը:

12)Վճարումները կատարվում են Արթիկի համայնքապետարանում՝ աճուրդային հանձնաժողովին (աճուրդի կազմակերպիչ):

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկի համայնքապետարան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա.ՈՍԿԱՆՅԱՆ

Հայաստանի Հանրապետության
Շիրակի մարզ, Արթիկ համայնք,
2022 թվականի հունիսի 24

ՀԱՎԵԼՎԱԾ ԹԻՎ 3
Հայաստանի Հանրապետության Շիրակի
մարզի Արթիկ համայնքի ավագանու
2022 թվականի հունիսի 24-ի թիվ 125-Ն որոշման

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՄԱՐԴԱՏԱՐ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՆԵՐԻ ԱՃՈՒՐԴՈՎ ՕՏԱՐՄԱՆ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ (ԱՃՈՒՐԴԻ ԿԱԶՄԱԿԵՐՊԻՉ) ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.Սույն կանոնակարգով սահմանվում է Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի սեփականությունը հանդիսացող, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայանքի ավագանու 2022թվականի հունիսի 24-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի սեփականությունը հանդիսացող մարդատար մեքենաները աճուրդով օտարելու, օտարման մեկնարկային գինն ու պայմանները հաստատելու մասին» թիվ 125-Ն որոշման հավելված թիվ 1-ով սահմանված մարդատար ավտոմեքենաների աճուրդի միջոցով օտարման աճուրդային հանձնաժողովի գործունեության կանոնները:

2. Աճուրդի կազմակերպիչ է հանդիսանում Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի տեղական ինքնակառավարման մարմինները՝ ի դեմս Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանու 2022 թվականի հունիսի 24-ի<<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի սեփականությունը հանդիսացող մարդատար մեքենաները աճուրդով օտարելու, օտարման մեկնարկային գինն ու պայմանները հաստատելու մասին>> թիվ 125-Ն որոշմամբ ստեղծված աճուրդային հանձնաժողովը՝ հետևյալ անհատական կազմով՝

1) Անանիկ Ոսկանյան - հանձնաժողովի նախագահ, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ղեկավար,
2) Արա Սուքիասյան - հանձնաժողովի անդամ, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար,
3) Վարդան Մակեյան - հանձնաժողովի անդամ, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկի համայնքի ղեկավարի տեղակալ
4) Արկադի Թադևոսյան - հանձնաժողովի անդամ, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկի համայնքապետարանի քարտուղարության, անձնակազմի կառավարման և տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնի պետի լիազորություններն ու գործառույթները կատարող
5) Ցոլակ Հովհաննիսյան - Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ղեկավարի խորհրդական
6) Տաթևիկ Չարչյան - հանձնաժողովի անդամ, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկի համայնքապետարանի քարտուղարության, անձնակազմի կառավարման և տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնի առաջատար մասնագետի լիազորություններն ու գործառույթները կատարող
7) Վարդուհի Հովհաննիսյան - Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանու «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության ավագանու անդամ

8) Ոսկան Վարդանյան – Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանու «Միասնական Արթիկ» խմբակցության ավագանու անդամ
9) Հովհաննես Սահակյան - Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանու «Հանուն Հանրապետության» խմբակցության ավագանու անդամ
10) Արտակ Հարությունյան - Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանու «Ազատական կուսակցություն» խմբակցության ավագանու անդամ
11) Հակոբ Մաթիլյան - Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանու «Դաշնակցություն» խմբակցության ավագանու անդամ
12) Արթուր Աստոյան - Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանու «Ապրելու երկիր» խմբակցության ավագանու անդամ

3.Հանձնաժողովը ղեկավարվում է <<Հրապարակային սակարկությունների մասին>>, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքներով, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանու 2022 թվականի հունիսի 24-ի <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի սեփականությունը հանդիսացող մարդատար մեքենաները աճուրդով օտարելու, օտարման մեկնարկային գինն ու պայմանները հաստատելու մասին>> թիվ 125 -Ն որոշմամբ, սույն կանոնակարգով և այլ իրավական ակտերով:

II . ԱՃՈՒՐԴԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

4. Աճուրդը անցկացնել սակարկությունների ձևով, որի ընթացքում հաղթող ճանաչել այն մասնակցին, որն աճուրդի դրված գույքի համար առաջարկել է առավելագույն բարձր գին:

5. Աճուրդը անցկացնել 2022 թվականի 2022 թվականի հուլիսի 19-ին, ժամը 11-00-ին: Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկի համայնքապետարանի շենքում (Հասցե՝ Հայաստանի Հանրապետություն Շիրակի մարզ Արթիկ համայնք, Արթիկ քաղաք Ազատության հրապարակ 1):

6. Աճուրդի մասին հրապարակային ծանուցումը հրապարակվում է նվազագույնը 2000 տպաքանակ ունեցող մամուլում և http://www.azdarar.am հասցեում գտնվող Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում՝ աճուրդի կայացման օրվանից առնվազն 20 օր առաջ:

7. Աճուրդի հրապարակային ծանուցման մասին հայտարարությունը աճուրդի անցկացման վայրում և համայնքի մարդաշատ այլ վայրերում տեղադրվում է աճուրդի կայացման օրվանից առնվազն 15 օր առաջ: Աճուրդի մասին հրապարակային ծանուցումը՝ աճուրդի կայացման օրվանից առնվազն մեկ օր առաջ տեղադրվում է աճուրդի կայացման վայրում:

8. Հրապարակային սակարկությունների մասնակից կարող են հանդիսանալ ֆիզիկական և իրավաբանական անձինք, ինչպես նաև համայնքները:

9. Հրապարակային սակարկություններին չեն կարող մասնակցել՝

1) աճուրդային հանձնաժողովի անդամները (աճուրդի կազմակերպիչ),

2) համայնքի ավագանու անդամները,

3) աճուրդավարի երեխաները, ծնողները, ամուսինը, տատը, պապը, եղբայրները և քույրերը, ինչպես նաև աճուրդավարի ամուսնու ծնողները, տատը, պապը, եղբայրները և քույրերը:

10. Աճուրդի մասնակցության վճարի չափը սահմանված է 2000 (երկու հազար) Հայաստանի Հանրապետության դրամ:

11. Աճուրդին կարող են ներկա գտնվել աճուրդի մասնակից չհամարվող այլ անձինք (հետագայում դիտորդ), ովքեր վճարել են մուտքի տոմսի վճարը:

12. Դիտորդների համար մուտքի տոմսի վճարի չափը սահմանվում է 1000 (մեկ հազար) Հայաստանի Հանրապետության դրամ:

12. Աճուրդի մասնակիցները և Դիտորդները, աճուրդի դահլիճում զբաղեցնում են առանձին տեղեր:

13. Աճուրդի մասնակիցները և Դիտորդները պարտավոր են չխոչընդոտել աճուրդի անցկացմանը և հետևել հետևյալ կանոններին՝

1) չհայտնել իրենց դժգոհությունը որևէ մասնակցի, մասնակից չհամարվող անձի, աճուրդային հանձնաժողովի կամ աճուրդավարի նկատմամբ,

2) չխոսել աճուրդի ընթացքում, բացառությամբ սույն պայմաններով սահմանված դեպքերի,

3) հարցադրումներ ուղղել աճուրդային հանձնաժողովի նախագահին լոտի աճուրդը սկսվելուց առաջ կամ հետո, իսկ լոտի աճուրդի ընթացքում միայն աճուրդավարի թույլտվությամբ,

4) աճուրդի ընթացքում դուրս չգալ դահլիճից կամ չվերադառնալ դահլիճ,

5) չթաքցնել աճուրդավարի կամ նրա ամուսնու ազգական լինելու հանգամանքը:

14. Աճուրդի դրված գույքի մեկնարկային գները հաստատված են Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանու 2022 թվականի հունիսի 24-ի <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի սեփականությունը հանդիսացող մարդատար մեքենաները աճուրդով օտարելու, օտարման մեկնարկային գինն ու պայմանները հաստատելու մասին>> թիվ 125 -Ն որոշման հավելված թիվ 1-ով:

15. Աճուրդի մասնակցի համար գնային առաջարկի նվազագույն հավելման չափը սահմանվում է մեկնարկային գնի 5 տոկոսի չափով:

16. Աճուրդի նախավճարի չափը սահմանվում է մեկնարկային գնի 5 տոկոսի չափով, որի վճարումից հետո աճուրդի մասնակցին տրամադրվում է <<Աճուրդի մասնակցի վկայական>>:

17. Աճուրդի կանխավճարը և մուտքի վճարը վճարվում են աճուրդի կազմակերպչին:

18. Աճուրդում հաղթած է համարվում աճուրդի այն մասնակիցը, ով աճուրդավարի մուրճիկի երրորդ հատվածից հետո ներկայացրել է ամենաբարձր գնային հայտ:

19. 10) Աճուրդի դրված գույքի ուսումնասիրման համար ժամկետներ սահմանվում են 2022 թվականի հունիսի 26-ից մինչև հուլիսի 18-ը ժամը 10:00-ից մինչև 17:00-ն Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքում՝ համայնքապետարանի բակում:

20. Աճուրդի կանոնակարգին ծանոթացումը և լուսապատճեի տրամադրումը կատարվում է Արթիկի համայնքապետարանում 2022 թվականի հունիսի 26-ից մինչև հուլիսի 18-ը:

21. Աճուրդը սկսվելուց մեկ ժամ առաջ աճուրդային հանձնաժողովը (աճուրդի կազմակերպիչ) իր նիստում գրանցում է աճուրդի մասնակիցներին՝ ստուգելով նրանց ինքնությունը, լիազորությունները հաստատող փաստաթղթերը և իր որոշմամբ թույլատրում է մասնակցել աճուրդին:

22. Աճուրդի արդյունքների մասին աճուրդի անցկացնելու օրը կազմվում է արձանագրություն, որն ստորագրում են՝ աճուրդային հանձնաժողովի ներկա անդամները և աճուրդի հաղթող մասնակիցը:

23. Աճուրդում հաղթող ճանաչված մասնակցի հետ արձանագրության ստորագրման պահից նրան են անցնում համապատասխան գույքի վերաբերյալ առք ու վաճառքի մասին պայմանագիր կնքելու իրավունքը:

24. Աճուրդում հաղթող ճանաչված մասնակցի հետ առք ու վաճառքի պայմանագիրը կնքվում է աճուրդի կայացման օրվանից հետո 10-օրյա ժամկետում:

25. Գույքի ամբողջ գնի վճարումը գնորդի կողմից կատարվում է աճուրդի կայացման օրվանից հետո 10-օրյա ժամկետում՝ հաշվանցելով մուծված նախավճարի գումարը:

26. Սահմանված ժամկետներում առք ու վաճառքի պայանագիրը չկնքելու և /կամ/ գույքի գինը չվճարելու դեպքում վճարված նախավճարը չի վերադարձվում և փոխանցվում է համայնքի բյուջե:

27. Գույքի առք ու վաճառքի նոտարական վավերացման հետ կապված ծախսերը կատարվում են աճուրդում հաղթող ճանաչված մասնակցի կողմից:

28. Աճուրդը կայանալու կամ չկայացած հայտարարվելու պահից մեկ աշխատանքային օրվա ընթացքում աճուրդում չհաղթած մասնակցին վերադարձվում է նախավճարը:

29. Աճուրդի մասնակցության հայտերն ընդունվում են Արթիկի համայնքապետարանում՝ աճուրդային հանձնաժողովի կողմից 2022 թվականի հունիսի 26-ից մինչև հուլիսի 18-ը ներառյալ՝ յուրաքանչյուր աշխատանքային օր, ժամը՝ 11:00-ից մինչև 16:00-ն:

30. Աճուրդին մասնակցել ցանկացողները ներկայացնում են ՝

1) հայտ՝ սահմանված ձևանմուշով,

2) ֆիզիկական անձանց համար՝ անձնագրի պատճեն,

3) իրավաբանական անձանց և համայնքների համար՝ ձեռնարկության հիմնադիր փաստաթղթերի պատճենները և ներկայացուցչի լիազորությունը հաստատող փաստաթուղթը,

4) նախավճարի մուծման անդորրագիրը:

31. Աճուրդային հանձնաժողովը աճուրդի արդյունքների վերաբերյալ կազմված եզրակացությունը մեկ օրվա ընթացքում ներկայացնում է համայնքի ղեկավարին:

32.Աճուրդում վաճառված գույքի նկատմամբ իրավունքները ենթակա են պետական գրանցման:

33. Աճուրդը համարվում է չկայացած եթե.

1) Աճուրդին ներկայացել է միայն մեկ գնորդ կամ չի ներկայացել որևէ գնորդ:

2) աճուրդի ընթացքում վաճառվող գույքի նախնական գնի հավելում չի կատարվել:

3) աճուրդում հաղթած անձը չի մուծել գնման գինը:

34. Աճուրդը հայտարարվում է չկայացած աճուրդային հանձնաժողովի որոշմամբ՝ ոչ ուշ քան նշված հանգամանքները ի հայտ գալու հաջորդ օրը:

35. Աճուրդը չկայանալու կամ անվավեր ճանաչվելու դեպքում կրկնական աճուրդը կազմակերպում և անցկացնում է չկայացած աճուրդից ոչ ուշ քան 10 օրացուցային օր հետո: Կրկնական աճուրդը կազմակերպում և անցկացնում է աճուրդային հանձնաժողովը՝ սույն կանոնակարգի և /կամ/ համայնքի ավագանու որոշմամբ սահմանված կարգով և պայմաններով:

36. Վերոհիշյալ կանոնների խախտմամբ անցկացված աճուրդը շահագրգիռ անձի հայցով դատարանը կարող է ճանաչել անվավեր: Աճուրդն անվավեր ճանաչելը հանգեցնում է դրանում հաղթած անձի հետ կնքված պայմանագրի անվավերության:

37. Աճուրդի մասնակիցների մասին տեղեկությունները հրապարակման ենթակա չեն:

III . ԱՃՈՒՐԴԱՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

38. Աճուրդային հանձնաժողովն իր աշխատանքները կազմակերպում է նիստերի միջոցով:

39. Նիստերն իրավազոր են, եթե դրանց մասնակցում է հանձնաժողովի անդամների սահմանված թվի կեսից ավելին:

40. Հանձնաժողովի որոշումներն ընդունվում են, եթե դրանց օգտին քվեարկել է նիստին մասնակցած հանձնաժողովի անդամների կեսից ավելին:

41. Աճուրդավարը և արձանագրողը հաստատվում են համայնքի ավագանու կամ աճուրդային հանձնաժողովի որոշմամբ:

42. Աճուրդային հանձնաժողովը դադարեցնում է իր լիազորությունները՝ աճուրդը կայացած ճանաչվելու, աճուրդի կայացման մասին արձանագրությունը ստորագրելու և համայնքի ղեկավարին աճուրդի արդյունքների վերաբերյալ համապատասխան եզրակացություն ներկայացնելուց հետո:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա.ՈՍԿԱՆՅԱՆ

Հայաստանի Հանրապետության
Շիրակի մարզ, Արթիկ համայնք
2022 թվականի հունիսի 24